ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՏՆՕՐԵՆ՝ Տ.ԽԱՉԻԿՅԱՆ

<<01>>սեպտեմբեր 2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ <<ԴՈՎԵՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

11_ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԴԱՍՂԵԿ՝ Ա.ՄԱՄՅԱՆ

2023-2024ՈՒՍՏԱՐԻ

Հաշվի առնելով և՝ ժամանակակից դպրոցի սաների հետ աշխատելուդժվարությունները, և՝ տարիքային շրջանի հետ կապված դժվարությունները, և՝
դասարանի անհատական առանձնահատկությունները, որպես դասղեկ,նախընտրում եմ
,,Դասղեկի ժամ ,, դասաժամերը կոչել բարոյագիտության և կյանքի դասաժամեր:

Այդ դասաժամերի զրույցի և բանավեճերի թեմաներն ընտրելիս օգտվել եմ առակների տարբեր գրքերից, մանկավարժական ամսագրերից, ,,Մտքի հրավառություն ,, գրքից և այլ բարոյախրատական ստեղծագործություններից: Ավելացնեմ նաև, որ ներքևում
նշված թեմաների ցուցակը միանգամայն փոփոխական է, քանի որ նպատակս է ուսումնասիրել երեխաների վարք ու բարքը և նկատված թերացումները վերացնել ու բացառել: Ընթացքում դասարանի վարքագիծը, ուսումնական առաջադիմության մակարդակը, կամ որպես աշակերտ նրանց պահվածքը կարող են նոր նպատակներծնել և թելադրել նոր ոճով ու թեմատիկայով աշխատանք: Իսկ այդպիսի փոփոխություններնու նորարարությունները կարտացոլվեն դասղեկի իմ օրվա պլանում:

(Դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանում սովորում են երեք տղա աշակերտ:Նրանք աչքի են ընկնում իրենց պատրաստակամությամբ ,պարտաճանաչ են :

Կիրակոսյան Սամվելը և Կիրակոսյան Նաիրին հաճախում են մաթեմատիկայի լրացուցիչ պարապմունքների,իսկ Հարությունյան Գևորգը՝ <<Դհոլի խմբակի>>:

Դասի համարը	Դասի թեման
1	Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում, նոր ուստարվաանելիքների ծրագրում, առաջարկությունների արկղիկի պատրաստում:
2	Հայրենիք, ազգ, մայրենի լեզու: Ինչքանո՞վ ենք յուրաքանչյուրս պատրաստ պահպանելու մեր ազգային որակները:
3	Անկախության անգնահատելի դերն ինձ համար:
4	Հավատ, գաղափարախոսություն, պատմություն և ժամանակ:
5	Հայաստանի հուշարձաններ: Ո՞ւր կուզենայի գնալ հաջորդուսումնական էքսկուրսիայի ժամանակ:
6	Աշխարհինկալում: Ես հարգում եմ նաև քո կարծիքը: Փոխըմբռնում:
7	Նյութապաշտություն և շահ: Անշահախնդիր նվիրում:
8	Ճակատագի՞ր, թե սեփական բախտի տնօրինում:
9	Հոգու կրթություն:
10	Հոգու կրթություն և մտքի թռիչք:

11	Ոսկե աշնան գույներն իմ խոհերում:
12	Տարբեր սերունդների անխուսափելի բախումներ և դրանց ճիշտհանգուցալուծումները:
13	Առաջին կիսամյակի ուսումնական արդյունքների վերանայում:
14	Ամանորյա ջերմ մաղթանքներ և բացիկներ: Դասարանի ձևավորում:
15	Հայրենի'ք,ես զարկն եմ քո բազկի:
16	Հայոց բանակ
17	Մարմնակրթություն, առողջապահություն:
18	Հիգիենիկ հարցեր:
19	Մարդկային արատներ:
20	Մարդկային արատներ:
21	Բարոյական արժեքներ, որ իմաստավորում են մեր կյանքը:
22	Ո՞վ է հոգեպես հարուստ իմ կարծիքով:
23	Սերը որպես տիեզերական զգացմունք:
24	Հանճարները սիրո մասին:
25	Սերը ոգեշնչման աղբյուր:
26	Խրատանի, առածանի, մեկնաբանություններ:
27	Ինքնատիրապետման մի քանի հարցեր:
28	Հայոց Ցեղասպանություն: Հույս և հավատ սեփական ուժերի հանդեպ:
29	Հաղթանակների ամիս մայիս:
30	Քչերը գիտեն, շատերը չգիտեն(հետաքրքիր տեղեկություններ):
31	Ո՞րն է իրական գեղեցկությունն ու հմայքը:
32	Ի՞նչ տվեց ինձ այս ուսումնական տարին
33	Վատ սովորությունների հետևանքները
34	Ամփոփիչ դաս:

ԱՄԵՆՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Էլեկտրոնային մատյանում նշել բացակայությունները:Հետևել կարգապահությանը:

ԱՄԵՆՇԱԲԱԹՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Անցկացնել դասղեկի ժամեր:

Կատարել այլ պլանավորված աշխատանքներ:

ՀՈԳԵՈՐ ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Զրույցների միջոցով բացատրել տարբեր աղանդների բացասական ազդեցությունը մարդու հոգևոր աշխարհի վրա: Սովորեցնել բոլոր իրավիճակներում զերծ մնալ բացասական երևույթներից:

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Արթնացնել սեր դեպի բնությունը, հայրենիքը, հարգանք դեպիմեծերը: Սովորեցնել կատարել բարի գործեր, օգնել կարիքավորներին, լինել ուշադիր բոլորի հանդեպ: Բացառել անտարբերությունը, ունենալ առանձնահատուկ դրսևորում գեղեցիկի նկատմամբ, արժևորել այն:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Զրույցների միջոցով հասանելի դարձնել ֆիզիկական կուլտուրայի դերը և նշանակությունը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներկայացնել աշակերտներին տարբեր մասնագիտությունների կարևորությունը: Արթնացնել սեր աշխատանքի նկատմամբ;Մեծ ակտիվություն ցուցաբերել շաբաթօրյակներին:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Կարևորել շրջակա միջավայրի պահպանությանխնդիրը:Մասնակից դարձնել բնապահպանական միջոցառումներին, հոգալ շրջակա միջավայրի մասին:

ԴՊՐՈՑ ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Կարևորել դպրոց ընտանիք կապը:Ծնողների և ծնող կոմիտեիհետ ստեղծել սերտ կապ հաղթահարելու բոլոր դժվարությունները:

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

1.Նոր ուսումնական տարվա անելիքների ծրագրում2.Ընթացիկ հարցերի քննարկում

3.Կիսամյակում կատարված աշխատանքների վերլուծություն4.Կազմակերպչական հարցեր

5. Էքսկուրսիայի կազմակերպում որևէ պատմամշակութային վայր:

ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ

	Ազգանուն, անուն	հասցե
Նախագահ	Մելանիյա Ստեփանյան	Գ. Դովեղ
Անդամ	Մերրի Շահնազարյան	Գ. Դովեղ